



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

Տարեկան գին 6 Արծաթ Կիսիսի: Վեցամեայ 31/2 " " " Մեկ ծանուցումը տողին 2 դուրով է Ստորագրութիւնները կանխիկ են: տարագրութիւնները ամեն ամսայ կը եւ 15իս կը սկսին:

Իւրաքանչիւր լրագրողուն 6ամբուն ծախքը առնողին վրայ է: Լրագրոյ վերաբերեալ նմանի կամ որ եւ իցէ գործիւն Խրագրին պիտի ուղղուի. եւ անոց նման ծախքը իրա կողմն վրայ է:

Ե. Զ. Դ

Կանոնները պատճառաւ մը լրագիրս շարժած օրը չկրնայիմ հրատարակել: այս աւուր մնաց. որուն համար մեր արդոյ բաժանորդաց ներողամտութիւնը կը խնդրենք:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 2 ՅՈՒՆԻՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԵՌՈՒՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 6 յունիս.

« Ի որս Բարեբախտ ծանոց խորհրդարանին թէ զեկամանաժողովս զինադադարումը երկարեալ վճիռ չառաւ: »

« Տերութեանց երեսփոխաններն հրահանգի կ'ապասեն: »

« Կեանքանաժողովին յառաջիկայ գումարման օրը դեռ յայտնի չէ: »

Քօրիզու 6 յունիս.

« Գեորգ առաջին թագաւորն այսօր հոս հասաւ և եւանդագին համակրութեամբ ընդունուեցաւ: »

Փարիզ 8 յունիս.

« Կը հաւատան թէ զեկամանաժողովն յառաջիկայ օրը լրագիրս 10ին նորին պիտի գումարի: »

« Հարուստ թեան հիմերուն վրայ դեռ համաձայնութիւն չկայ: »

« Հաւանական է որ զինադադարը տասն և հինգ օր ալ երկարի: »

Քաղաքականութիւնն զբաղեցնող ինքնինքն այս շարժում ալ տարտամ և անորոշ վիճակի մէջ ըլլալով, նոր բան մը չունիմք այս անգամ ծանուցանելը:

Լնտրայի զեկամանաժողովին մէջ խորհրդակցող անդամներն զեռ չեն կրցած համաձայնի ոչ հարուստ թեան հիմերուն և ոչ ալ զինադադարն երկարելու պայմաններուն վրայ:

Տանիմարայի կառավարութիւնն իմաց տուի է որ եթէ զեկամանաժողովն մինչև յունիս 12ը որ զինադադարման լրանումը պայմանաժամն է՝ հարուստ թեան համար ընդունելի հիմ մը չկրնայ գտնել: Տանիմարը զինադադարը երկարելու դիտարկութիւն չունի, և յունիս 13ին նուրբէն ծովային պաշարումը պիտի հաստատէ:

Ինչպէս որ կը տեսնուի, այս լուրերը զեկամանաժողովն արդեանցը վրայ յաջող քաղաքար մը չեն տար մեզ: Թէև վերջին հեռագրաւոր մը տակաւին յոյս կուտայ թէ յունիս 10ին գումարուելը դեռ պայմանաժամը գո'նէ զինադադարը տասն և հինգ օր ևս երկարելու ճար մը գտնէ:

Մէտերի ու Թունուզի ազատամբութիւններն ալ դեռ կը շարունակեն:

Առաջինին կանուխ կամ ուշ զարգելուն արտադրոյ չկայ: Երբէն գաղղբական զօրքերն ապստամբները գրեթէ չորս կողմէն պաշարելով՝ օր քան զօր նեղ շոջանակի մը մէջ ամփոփելու ետեւ են:

Վերջին հարուածը զիս բութեամբ տալու համար, իսկ Թունուզի մէջ՝ և ոչ իսկ ապստամբութեան դեմ մարտ ոչ կամ մարտաւելու համարձակող զօրութիւն կայ: Հետեւաբար վերջն ուր երթալիքը յարանի չէ:

Թունուզի նաւահանութիւնն առջև տանուելով պատերազմական նաւ կան զանազան տեղութեանց: Կանք առ սլոյմ միջամտութիւն ըսած շունին և միայն իրենց ազգակիցները պաշտպանելու պատրաստ կու կենցած են հոն:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օդոստափառ Ինքնակալը որ դարձան օրերը Քեան հոտ խանէի կայսերական քեօշը կը բնակէր, անցեալ ուրբաթ օր Տոլմա Պահաճի պալատը վերադարձաւ:

Կորին կայսերական վեհախառութիւնը իւր սեփական Թալիս անուն շոքեհաւով անցեալ շաբաթ օրը Արիմիզիա գնաց և երկուշաբթի իրիւսան դեմ մայրաքաղաքս վերադարձաւ:

Մորտուլաքիոյ Բարձր Քուզա իշխանը անցեալ երեքշաբթի օրը կայսերական Պերուս Գրգաթնով մայրաքաղաքս հասաւ, և իրեն համար պատրաստուած Վեօք սուլի կայսերական քեօշը իջաւ: Կամիչայի կայսերական պալատին առաջին քարտուղար Ս. սեմ. Կլին պէջը օդոստափառ Ինքնակալին կողմնէ՝ և արտաքին գործոց պաշտօնատան քարտուղար կան գործոց ընդհանուր քարտուղար Ս. սեմ. Կլոս Եֆեհիմի Բարձր Մեծ եպարքոս Փուստ փաշային և արտաքին գործոց պաշտօնեայ Բարձր Կալի փաշային կողմէն Վեօք սուլի երթալով բարձրատարակ իշխանին գաղտնի շնորհաւորեցին: Չորեքշաբթի օրը Բարձր Քուզա իշխանը պատիւ ունեցաւ Տոլմա Պահաճի պալատն երթալու և օդոստափառ Ինքնակալին ներկայ սնարու:

Ես ներկայութեան ետեւ ուր վեհախառ Սապր սիրալիք ընդունելութիւն մ'ըրաւ, Բարձր Քուզա իշխանը Բարձր Մեծ եպարքոսին և արտաքին գործոց պաշտօնեայ Բարձր Կալի փաշային յատուկ այցելութիւններ ըրաւ: Իրիւսան դեմ ալ Ս. սեմ. Մալիհ փաշային և իր ուղեկիցներուն հետ մայրաքաղաքիս օտար ազգաց զեկամաններուն պաշտօնական այցելութիւններ ըրաւ:

Հինգշաբթի օրն ալ յատկապէս Փեներ երթալով Յունաց ամենապատիւ Ս. Պատրիարքին ու Երուսաղէմայ Կաթողիկէ և Եղեքսանդրիոյ Պատրիարքներուն այցելութիւն ըրաւ:

Ուրբաթ օրն ալ օտար ազգաց դեռ պաններուն այցելութիւնը վայելեց և իրիւսանը մայրաքաղաքիս դարկեական դեսպան ար Ս. սեմ. մարքիզին Թարապիս յի տունը ծաշի հրաւիրուեցաւ:

Կայսերական հրամանաւ՝ Ոստիկանութեան պաշտօնէի օգնական (մուսուլման) Մուստաֆա պէ յին Միրզի վայի ատիճան տրուեցաւ:

Դամասկոսի Կալաֆ մեալիքի Օսման Խալիլ Եֆեհիմին կայսերական դանաճուն Թահիրաթ մեալիքի անուանեցաւ, և այս առթիւ երկրորդ կարգի պաշտօնատարի երկրորդ աստիճան տրուեցաւ իրեն:

ՊՍԵՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ

Կորին կայսերական վեհախառութեան բանակին համար պէտք եղած մեկ տարեկան միւր մատակարարել ուղղով մը պէտք եղած պայմաններով 5 1/2 դուրուշի յանձնառու ըլլալով, կը ծանուցուի որ և թէ այս գինն փար տուող մէկը գտնուի, պէտք է որ յունիս 6 շաբաթ օրը ժամը 6ին Պատերազմական գործոց պաշտօնատան մէջ Տար Եւրայի կողմը գտնուի, զի անալով միանգամայն օր յիշեալ օրէն ետքը ալ անուրբը պիտի դադրի:

ԱԶԳԱՅԻՆ

Կախինթայ թուով հրատարակուած պաշտօնական ծանուցման համեմատ ուրբաթ օր ազգային երեսփոխանը դարձեալ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին յիշահանուր ժողով գումարեցաւ:

Կերկայ երեսփոխանայ թիւն էր 68 ըսել է որ դարձեալ օրինաւոր նիստ կազմելու համար պէտք եղած գտնէ 71 երեսփոխանայ թիւն ամբողջ չէր: . . . . . Եսու ամենայնիւ ժամը 7ին տանն բացուեցաւ իսկ խորհրդակցութիւն ընելու, և որոշում ընել հարկ եղած ասան բացակայ եղող անդամոց փարձիքն առնելու պայմանաւ:

Չեք ուզեր մի առ մի յիշել եղած խօսքերը, յայտնուած կարծիքները, բացաւ զինքանախարհիւնները և մինչև իսկ բանակի իւնները՝ որ օրինաւոր ասան չէր գտնուի: Բանք միայն վեր ՚ի վերայ թէ Քաղաքական ժողովոյ հրամարեալ հինգ անդամոց տեղ նոր անդամոց ընտրութեան համար նախընտաց հինգշաբթի օրը եղած քուէարկութիւնն անփաւեր ծանցուեցաւ սա նկատմամբ որ քուէարկու երեսփոխանայ մեծ մասը Տառնան Ս. սեմ. Յովհաննէս պէ յին տեղ ընտրուելը Քաղաքական ժողովականին համար տալիք առաջին քուէնին փոխանակ երեք զատան ձի տրուելու՝ համեմատական առաւելութեամբ ընտրուելը հինգ Քաղաքական ժողովականաց քուէին հետ շիփթեր, վեց հողի վրայ քուէ տուել են: և որովհետեւ ան հինգը համեմատական առաւելութեամբ պիտի ընտրուէր և մէկը բացարձակ առաւելութեամբ, ուստի որոշուեցաւ այս կէտը արժանապէս պարզելով երեսփոխանայ ներկայացընել և որոշ կերպով քուէ ինքնու ճինը համեմատական առաւելութեամբ ընտրելուց՝ և մէկ մ'ալ բացարձակ առաւելութեամբ ընտրելոյ մը վրայ:

Առստի նախկին քուէարկութեան ասան առաւելագոյն քուէ ստացողաց անունները կրկին նամակաւ մ'երեսփոխանայ պիտի զրկուին, որպէս զի այսօր երեքշաբթի դարձեալ աննցմէ հինգին համար զատ

և ուրիշ մեկուսը համար ալ զատ քուէ տան և Քաղաքական ժողովն իր ամբողջութիւնը գտնէ: Եստէ զատ ազգային ընդհանուր արոյ խնդրոյն վրայ Քաղաքական ժողովոյ պառաստած անդեհալ զրին վրայ ալ և ալ զխաղութիւնները ըլլալով, առարկուեցաւ որ ներկայացուած ազգային ծախքը վրայ չափաւորութիւն և ըստ այնմ անօրէնութիւն ըլլայ, որպէսզի ընդհանուր արոյ բաշխումն ու հետեւաբար հաւաքումը զիւրանայ:

Կերկայի դատուն Ս. Պոլոյ մէջ ընծայարան մը հաստատելու խնդրոյն կառուցութիւնն ալ ծանուցուեցաւ, բայց որովհետեւ տեղեկագիր մը պատրաստուած չէր, ուստի խնդրոյն վերջնական լուծուած մը չկրցաւ արուիլ:

Եստէ զատ Չարսանձախի նահանգին մէջ գտնուող 3000 տունի չափ հոյ ժողովրդեան տեղեկութիւններու ձեռքէ կրած անորոք հարստահարութեանց, զիմանաց և տուտպանաց առաջին առնելու համար հազարն աւելի ստորադրութեամբ հանրազիր մը մատուցուեցաւ իւր ժողովոյ, որով կը խնդրուէր Հայաստանի մէկ քանի դաւաւաց և մանաւորաբար Չարսանձախի հոյ ժողովրդոց կրած անտանելի նեղութեանց զարման մը տանելու համար յատուկ քննիչներ հանել այն կողմերը:

Եստէ հանրազիր կարգադրելով ամեն մենապատիւ Ս. Պատրիարք Տօր յանձնուեցաւ, որ ինչպէս անցեալները տեղեկն առաջնորդէն, հեռագրով ստացած փաւեր տեղեկութեանց վրայ անմիջապէս Բարձր Պուսը զիմեր, գործուած հարստահարութեանց և զիմանաց զարման խնդրեր, և Բարձր մեծ Կարաքոս Փուստ փաշան ալ անմիջապէս պէտք եղած հրամանները դաւաւան կուտակային զրկել էր, բայց տեղեկութիւններ քանի մը որ ինքզինքնին փար գնելէ ետեւ նորէն սկսեց են հարստահարութիւնները շարունակել աւելի դիմեալ կերպիւ, այս ամենը թէ՛ գտնուեց և թէ՛ գրով իմաց տայ բարեխնամ կառավարութեան, որպէս զի պէտք եղած զարման անմիջական կերպով անօրինուի և Չարսանձախի 3000 տուն հեյազգի բընակիչները տառապանքէ ապասին:

Եստէ գործը փնտրանային Քաղաքական ժողովոյ հոգածութեան յանձնուելէ ետեւ ժողովը վերջացաւ ժամը 10 1/2ին:

« Մեծարգոյ հրատարակիչ Մալիս լրագրոյ: »

« Չեր 640 թուոյն մէջ Քաղաքական ժողովոյ արձանագրութեան քաղելով ըսած էր, թէ Վեր. Կրկնապոս եւ պիտիպոսը Մարաշի առաջնորդ առաջադիւր եմ, և թէ ժողովոյն առաջարկած Մալիս վարդապետին համար անխոհեմ ըսած եմ: Եստէ և ոչ մէկը ուղղ չէ: »

« Առաջինին համար ըսած եմ թէ Կրկնապոս եպիսկոպոսին առաջնորդութեան հրամարելուն պատճառը յարգ անձնօրէն է մեզ. իսկ երկրորդին համար ըսած եմ թէ բանիւրուն և գործունեայ է. անխոհեմ ուրիշ մ'ըսած է թերեւս: »

« Այսպէս որ այս կերպով զխաղաւ: »

Թիւն հրատարակել բարեհաճիք  
27 մայիս 1864 Չորր  
Կ. Պոլիս Կերտս եպիսկոպոս

Գեր. Կերտս Արքայանք կրնայ կա-  
տարելագրել փաստս ըլլալ որ մեր հրատա-  
րարական տեղեկութիւնը մանաւանդ իր  
ակնարկած մասերը բառ առ բառ Բարե-  
քական ժողովոյ արձանարկութեան հան-  
ւած են. հետեւաբար աւելորդ է ըսել թէ  
իր դիտողութիւնը բնաւ մեզ չէրաբերիր:

Հինգշաբթի օրը Համբարձման տո-  
նին առթիւ Ազգային Ս Փրկչի հիւան-  
դանոցին մէջ զեղեցիկ հանդէս մը կատար-  
ւեցաւ:

Մանասաւիւ Արքայան Ատորիսը  
Հայրը չորեքշաբթի օրէն յիշեալ Ազգա-  
յին ինստիտուտուն երթալով բոլոր պատրա-  
ստութեան զատ զատ այցելութիւն մ'ըրաւ.  
յետոյ անաբարունջ որբոց վարժարանն ել-  
նելով՝ անոնց ուսմանը վրայ մանրամասն  
հարցուիորձ րուաւ, և իր գոհունակութիւ-  
նն յայտնելով օրհնեց ոչ միայն Ս Փրկչի  
հիւանդանոցին պատուարժան հոգարար-  
ձաններն և աշխատակիցները, այլ և հա-  
մարտէն Ազգը որ յիշեալ յարկին մէջ պա-  
տրաստութեան անհնամ չթողուր երբէք:

Հինգշաբթի առտու Կորին սրբազ-  
նութիւնը յատկապէս Ս. Պատարագ  
մատոց հիւանդանոցի մատակարար մէջ՝ ուր  
ներկայ կը գտնուէին նաև կրօնական դա-  
տէն քանի մը բարձրաստիճան եկեղեցա-  
կաններ, հիւանդանոցի հոգարարձանութեան  
և Տեստական խորհրդոյ անդամներէն  
մէկ քանին, և խուան բազմութիւն աղ-  
բայնոց որք մայրաքաղաքի շրջակայքներէն  
հոն գաղթած էին:

Ս. Պատարագէն ետև դարձեալ ա-  
մենապատիւ Ս. Պատրիարք Հայրն ըն-  
կերութեամբ եկեղեցական դասուն և աշ-  
խարհական վարժարանին այցելութիւն  
ըրաւ, ուր համառօտ քննութիւն մ'ե-  
ղաւ ի մեծ գոհունակութիւն հանդիսա-  
կանաց. Այս առթիւ վարժարանին զըլ-  
խաւոր դասատու Պատուելի Պ. Թա-  
ղեաթ Ս. Բարդուղէմէն իմաստալիք բա-  
նաստութիւն մ'ընելով՝ աշակերտաց ան-  
կեղծ գոհութեանն ու խորին շնորհակա-  
տեցի թարգման եղաւ առ ամենապատիւ  
Ս. Պատրիարք Հայրն, առ բարեջան  
հոգարարձանութիւնն, և առ ամենայն բա-  
րեբարս ազգին. միանգամայն ջերմեանդ  
բարեմակութեանն ըրաւ վասն անգին  
կենաց և բարօրութեան բարեխնամ Ինք  
նահալին մերոյ վեհախորհրդան Առթիւն Ազ-  
գային Ազգիկ առատաբար խոստով  
Ս. Պատրիարք Հայրը մինչև ժամ ութ հոն  
կենաց ետև մեկնեցաւ:

Ընկեր անոնք որ այս մտերս Ս. Փրկչի  
չի հիւանդանոցն այցելութիւն ըրած, և  
անոր անցեալ վիճակն այժմեանին հետ  
բաղդատած են, չեն կրնար անժխտելի  
շնորհակալեաց պարտք մը զլսնալ թէ՛  
այժմեան մեծարդոյ հոգարարձանաց և  
թէ՛ անդուազութիւնս մանամալ տիկնաց,  
որք իրենց սեփական տանք պէս այն աղ-  
բային տան ալ բարեկարգութեամբ փոյթ,  
ջանք, աշխատութիւն և զոհ չեն ինա-  
յեր:

Արևիկի օրը՝ մայիս 24 ազգային Սահ-  
մանարկութեան չորրորդ տարեկարծք տո-  
նեցաւ դարձեալ Հիւնքեար Խսկէտիի  
գեղազուարճ դաշտին մէջ՝ խիստ կանո-  
նաւոր կերպով:

Իւսկիւտար և Սամաթիա բնակող  
ազգայիններէ կազմուած մասնագործ մը  
որ սոյն ազգային տօնին հանդիսալիք ե-  
ղած էր, խոհական նախատեսութեամբ  
թէ՛ հանդիսին կանոնաւորութեանն ու բա-  
րեկարգութեանը և թէ՛ հանդիսականաց  
հանգստութեանը համար պէտք եղած ա-  
մեն միջոցները պատրաստած ու ի գործ  
դրած ըլլալով, ամենուն գոհութեանն ու  
շնորհակալութեանն արժանի եղաւ:

Ըստ օրոնուն երկու շաբաթ մէկը  
Սամաթիայէն և միւսն ալ կամուրջէն  
ճանապ ելնելով, Առթիւն շրջակայ գե-  
ղերէն հանդիսականներն առին ուղղակի

Պէ յբոյ տարին, ուր տեղւոյն պատուար-  
ժան Թաղական խորհուրդն հանդիսին շը-  
քեղութեամբ համար ամեն հնար եղած  
պատրաստութիւններն ըրեր էր: Եկեղեց-  
ւոյն փողոցը երկուտեք կանաչներով ու  
ճաղիկներով զարդարուած և եկեղեցւոյն  
մօտ ալ ճաղիկայ կանաչաւու մը շին-  
ւած էր, որուն վրայն սպիտակագրեաց  
աղջկանք վարդ կը ցանէին հանդիսակա-  
նաց վրայ:

Ս. Պատարագի աւարտումէն ետև,  
չոր Կերտս սրբազան եպիսկոպոսը կը  
մատուցանէր, և որ առթիւն յարմար զե-  
ղեցիկ առնարանութիւն մ'ըրաւ եկե-  
ղեցւոյն դրանք առջև պատրաստուած  
բարձրաւանդակին վրայ, հանդիսականք  
Հիւնքեար Խսկէտիի դաշտը գային ի  
ձայն նուազարանաց, և հոն քիչ մը հան-  
գրասանայէ ետև ճաղեցին: Յետոյ պար  
և նուագահանգէս եղաւ մինչև ժամ 7:  
Ասոցմէ ետև առնարանութիւններն ըս-  
կրան: Հաջիւ մէկ քանին լնցեր էր,  
հանդիսականաց համար պատրաստուած  
ցանկապատին դուրսը գտնուող ազգայնոցմէ  
ոմանք որոնք կերելի թէ իրաւանց և պար-  
տոց սիրեանց վրայ խիստ տկար դարձաւոր  
ուներն, հանդիսին բաժանորդ գրուող և  
ստակ վճարող հանդիսականաց իրաւունքն  
առաջ ուր կոխելով՝ բռնարար ցանկորմէն  
ներս խուճեցին և հանդիսին բարեկար-  
գութիւնը վայելեան մը խանդարեցին: Այս  
անպատահ գործը թէ և տխուր աղաւորու-  
թիւն մ'ըրաւ հոն գտնուող հազարաւոր  
պատուարժան ազգայնոց վրայ, այսու ամե-  
նայնիւ հանդիսալիք մասնագործն առանց  
խուճելու հանդէսը շարունակեց դաշտին  
մէջ նուագահանգէսով շրջապայելով, և  
վերջապէս ժամ իննին հանդիսականք վե-  
րստին շոքեաւ նստելով իրենց տեղերը  
դարձան ամենայն հանգստութեամբ:

Արինէն մայիս 16 թուով զրուած  
նամակ մը ցաւալի լուր մը կը հաղորդէ  
մեզ, որ եթէ սոյնգ է, խիստ տխուր դա-  
ղափար մը կուտայ վիճակին Գեր. Ս.  
Աւաջնորդին զրոյցմանը վրայ:

Արնոյ շրջակայ Գեր. Ս. Սարգիս  
ընակիչներէն Պալուստ անուն քսանմանի  
խնդուկ հայ պատանի մը՝ նոյն զիւղի բնա-  
կիւ տաճիկ տղայ մը չարաչար վերաւորելով  
տղան քանի մ'օրէն մեռեր է: Ըտոր վը-  
րայ տեղւոյն կուտալով Ա սեմ. Իսմա-  
յիկ փաշան յիշեալ մարդասպանը բան-  
տարիւն և եղելով թիւր թ. Գրան ծա-  
նուցանելով վճիռ ելեր է թէ պատանին  
մահուան դատապարտուի, եթէ սպանե-  
լոյն մերձաւորները վրիպնք չընդունին:

Ա սեմ. կուտալով մարդասպարար  
խորհելով որ այս սպանութիւնը կամա-  
ւոր չէ, տաճիկ տղուն ծնողքը համոզեր  
է որ փոխանակ արիւն ընդ արեան պա-  
հանջելով՝ վրիպնք մ'ընդունին: Աւստի  
Արնոյ Գեր. Աւաջնորդին իմաց տուեր  
է եղելով թիւր, խոստ անալով որ ինք ալ  
իր կողմանէ սպանելոյն ծնողաց արուեկը  
վրիպանալոյն նպատակ է, եթէ աւաջնորդն  
ու տեղւոյն հայ բնակիչքն ալ մասնակցին  
այս գործին, և խեղաբար պատանին մահ-  
ւրէն ազատեն:

Սակայն Ա սեմ. Իսմայիկ փաշային  
այս մարդասպարական առաջարկութիւնը  
Գեր. Յարութիւն եպիսկոպոսին անը-  
սելի ըլլալով, ոչ տեղւոյն թաղական խոր-  
հուրդն կը հաղորդէ գործը, ոչ իր կող-  
մանէ որ և իցէ անօրէնութիւն մը կրնէ,  
և ոչ ալ դատապարտելոյն վերջին քը-  
րիտանեական պարտաւորութիւնը կա-  
տարելու համար կուտալով կողմանէ  
ինչորում քահանան կը զիկէ Ս սեմ.  
կուտալով ալ տեսնելով որ իր բարի խոր-  
հուրդն ու առաջարկութիւնն անբարեկե-  
ղած է և պատանին մ'անդամ չընդու-  
նիր, թ. Գրան հրամանին համեմատ ար-  
եան վճիռը կատարել կուտայ, և խեղա-  
բար Պալուստը դահճի ձեռքը հրապա-  
րակաւ կը զլրատուի: Այս ամեն միայն  
կրնանոյ Արնոյ ժողովուրդն իր հովուին  
ինչ անաղաղուն սրտի տէր ըլլալը:

Իգիլիք քահանայական դասն հետև-  
եալ շնորհակալեաց ուղերձը դրած ըլլա-  
լով տեղւոյն պատուարժան թաղական  
խորհուրդն, արժան կը համարինք ըստ խնդ-  
րանաց բազմութիւ Չ միւսնոցի յարգոյ  
ազգայնոց հրատարակել ի և ի պատաս-  
խանի Արքայոյս լրագրին նոյն խորհուրդոյ  
դէմ հրատարակած տարաբեկ ամբաս-  
տանութեանց:

Այս ազգասէր և բարեջան Թաղա-  
կան խորհուրդ քաղաքիս:

Մեծարող Տեղիք

Սոն պարագաներ որոնց հանդիպած  
տանն եթէ լռութիւն պահուի, ապրիլնա-  
ւորութիւններ տեղի կուտան և հասարա-  
կութեան անդորրութիւնը կ'ընդունի ուրե-  
մն հարկ է և մանաւանդ պարտաւորու-  
թիւն՝ որ պէտք եղած ամեն մարդս իւր  
կարծիքը յայտնէ անկեղծօրէն տեսած և  
քննած բաներուն վրայ, առանց որ և  
է անկեղծութեան, հասարակութիւնն է որ  
ընտրեց Թաղական խորհուրդ անդամները  
և հաստատեց զԹաղական խորհուրդը,  
որ միայն հասարակութեան պատասխանա-  
տու է առ այժմ և ոչ թէ որ և է կող-  
մանակցութեան մը: Հասարակութիւնն ի-  
րաւունք ունի պահանջելու որ Թաղա-  
կան խորհուրդը ապրիլնաւորութեանց  
չարժանութիւնը չըլլայ, հասարակութիւնը մի-  
այն կարող է զԹաղական խորհուրդը  
լուծելու, երբ անկեղծ իւր սահմանն  
կենդ է, և ձեռնհասութեանն վեր գոր-  
ծողութեանց միջամտել կրնայ: Բայց երբ  
յայտնի կը տեսնէ Թաղական խորհուրդ  
ըրած գոհողութիւնը, և անձնուիրաբար  
հանրութեան օղտին ծառայելը, յար-  
գանքը հանդիսը շնորհակալութիւն մա-  
տուցանելու պարտք կըլլայ և իւր գոհու-  
նակութիւնն կը յայտնէ: Թաղական խորհուր-  
դոյ արդիւնքն են անձնուիրաբար բաղա-  
թիւ ազգօգուտ ձեռնարկութիւններ և  
անօրէնութիւններ՝ որոնցմէ մէկ քանին  
միայն կնշմանակեմք այս տեղ համառօտու-  
թեամբ ի լուր ամենեցուն:

Ա. Ազգային դիւանատան հաստատու-  
թիւնը՝ ուր ազգին ելեմեւորը և ամեն  
գործադրութիւնները կարձանալու ին օ-  
րինաւորապէս, և ամեն ուղղորդ արտու  
է զիմեւ հոն վերահասու ըլլալու ազգին ել-  
մտական ներկայ վիճակին. վասն զի անց-  
եալը անթափանցելի խաւարի մէջ ծած-  
կուած երկրորդաձառն պահասութեան աղ-  
բային օրինաւոր դիւանատան:

Բ. Օրէնական ժողովոյ հաստատու-  
թիւնը՝ որուն ձեռքով ազգային վարժա-  
րանք բարեկարգ և յառաջադէմ ընթաց-  
քի մէջ կ'ընտուին:

Գ. Եկեղեցւոյ խաչկալներուն շինու-  
թեան յարաւե շարունակութիւնը, որոնք  
եթէ ծրար իրերուն համեմատ լրանան,  
Տաճիկաստանի մէջ իրաւաբ. առաջին խաչ-  
կալներ պիտի համարուին:

Դ. Կարօտեալ ազգայնոց եղած նը-  
պատաները, որ կրնեն ոչ միայն ազգային  
մտուցանել այլ և երբեմն ալ Թաղական  
խորհուրդը քանկեն, անշուշտ ազգային  
անաւակին ծանրութիւն չտարու համար:

Ե. Ազգային հիւանդանոցին նոր կեր-  
պարանք մ'ստանալն ըստ ամեն այն մասին,  
և վե հապէս ընդհանուր խօսելով աղ-  
բային ամեն գործոց բարեկարգ և օրի-  
նաւոր ընթացքը:

Թաղական խորհուրդն այս ամեն բա-  
նի մէջ Սահմանադրութեան տրամադրու-  
թեանը համեմատ իւր ձեռնհասութեանն  
վեր բան մը չըրաւ և իւր սահմանն վեր  
չեղաւ: Իր կազմութեան ի վեր անընդհատ  
կը շարունակէ ազգասիրտբար իր շար. սթա-  
կան նիստերը՝ նախագահութեամբ առաջ-  
նորդական փոխանորդ Չ օր ի բարեք տը-  
նօրէնութիւն ազգային գործոց:

Մեծարող տեարք, տեսնելով այս ա-  
մենը, աչքերնուս առջև ունենալով հա-  
սարակութեան ներկայ խաղաղ վիճակը,  
կ'յայտնեմք ձեզ մեր գոհունակութիւնը  
և կը մատուցանեմք մեր շնորհակալութիւնը  
կը յայտնեմք նաև որ հասարակութիւնը  
յուզեալ չէ բնաւ ի պատճառս խաչկալի  
կամ ուրիշ խնդիրներու վրայ ինչպէս որ

կը կարծուի: այլ միշտ կը սիրէ խաղաղու-  
թիւնը կը սիրէ և զձեզ, և կը յարգէ ձեր  
անօրէնութիւնները տեսնելով որ անոնց  
բոլորն ալ յօգուտ ի պայծառութիւն և  
ինպատ ազգին են:

Ազգայնոց, մեծարող տեարք, որ մեր  
Բահանայական դասուն գոհունակու-  
թեան և շնորհակալութեան զրոյցմանց  
յայտարար այս գրութիւնն ընդունիք:

Մնամք աղօթող փան կենաց մեծար-  
ող տեարք և փափաքող բարօրութեան  
սիրելի ազգիս մերոյ

Պատգ. Բահանայի Չ միւսնոց  
Տեր Գեորգ առաջ քահանայ  
» Ամէն »  
» Առաքել »  
» Պետրոս »  
» Յակոբ »  
» Ստեփան »  
» Աւետի »  
» Մատթէոս »

Ի 14 մայիս. 1864 Չ միւսնոց  
Բարեշնորհ Տեր Յովհաննէս և Տեր  
Կարապետ եղբարք չի հանձնեան ստորա-  
գրել:

Մտարակոյ Տեր Փիլիպպոս և Տեր  
Գաւիթ եղբարք ալ մեղի համալիս են,  
բայց Չ միւսնոց չի գտնուելուն համար  
է որ չէրևար ստորագրութիւնն:

Ահաւասիկ նախընթաց թուով Տեր  
տեսական խորհուրդ պաշտօնական ծա-  
նուցման մէջ յիշուած նամակը՝ որուն  
հրատարակումը ինչորում էր մենք յիշեալ  
Ազգային խորհուրդը:

Մեծարող տեարք ազգային Տեսու-  
սական խորհուրդ:

Ինչպէս ողջ ազգին, նոյնպէս և ձեր աղ-  
նուութեան յայտնի է թէ ստորագրեալ ըստ  
Սահմանադրութեան առաջին տարեկարծին  
«Ազգային» անունով ստակ հաւաքեցինք  
հանդիսալիք ժողովն մեր այլ անդամներուն  
հետ՝ Հիւանդանոցի ուսումնարանը կրկու-  
թիւն անաղ որք, անտէր և ալ ըստ տղայոց  
հացիկերով մը տալու նպատակաւ. — Մտ 10  
հազար դրուով ստակ հաւաքուեալ այս  
հացիկերովն համար — Ազգային հիւանդա-  
նոցի նոյն ստանին հոգաբարձուք, որոց մէկ  
երկու քը այսօր ալ իրենց արձանաւորութեան  
ը վերջնարուած են դարձեալ, մեզի առա-  
ջարկեցին որ փոխանակ նոյն գումարը հացիկե-  
րով մը վասնելու, աւելի օգտակար կեր-  
պով գործածենք, Հիւանդանոցի մէջ պատրա-  
ստարեց լրջելու լուալու համար տարին 10-  
50 հազար դրուով ծախք կերթայ ըսին. եթէ  
նոր ձեւով և շողով լուացարան մը շինու-  
նայն ամեն տարին 20-50 հազար հաղիւ կերթայ  
Այս առաջարկութիւնը հրատարակու չէ նե  
ալ՝ առանձին շատ ազգայնոց հաղորդեցինք.  
ամենքն ալ այս ողբիլի առաջարկութիւնն ըն-  
դունեցին, միւր ալ անոր գործադրութիւնը  
պատուիրեցին. մենք ալ անմիջապէս հայադ-  
ղի վարդապետ մը տարինք հոն, որ չափեց ձեւեց  
ու իմացուց թէ էն քիչը 20 հազար դրուով  
պէտք է այն տեսակ լուացարան մը հիմնի վը-  
րայ շինելու համար: Այն կողմին մեր ձեռքն  
կրած ստակին անբաւականութիւնը, միւս  
կողմին 20 հազար դրուով գրամալ լրջով մը  
տարին ազգին 20 հազար դրուով շահեցնե-  
լու փափաքը մեզ համոզեցին պատրաստ ստա-  
կը մինչև թ. տարեկարծ պահելու, և նոյն  
օրը այնչափ մ'ալ ձեռք բերելով՝ գոնէ տարի  
մը ետքը նոյն լուացարանը շինելու. ուստի  
նոյն դուրսը աւանդ տուինք Գումագալուի  
Ընթացակարգ ընկերութեան անտուկին:

Ազգային խորհուրդները վրայ եկան,  
երկրորդ տարեկարծի հանդէսը անպէտ և ան-  
զըրու ի կատարուեցաւ, և նոյն տարին ազգին  
հետ մենք ալ մեր նպատակին չկրցանք հաս-  
նիլ, Անկէ ետք թղթադրամները վերանալու  
միջոցին մենք 2 հոգի գացին վերոյիշեալ ըն-  
կերութեան անտուկին առին այս վարդապետը,  
ուր մնացած էր Կամիս, և ոսկիի փոխելով, որ  
56 յ օտմանեան լրիւ ըրաւ, բերին ու ուրիշ  
ապահով տեղ մը աւանդ ձգեցինք, և վերջին  
տարեկարծին ալ ոչ որք մենք ալ և ալ պատ-  
ճաններով կրցաւ գտնուիլ հանդիսալիք ժո-  
ղովն մէջ. այն անպատի յանձնագործին ալ  
ազգայնոց խորհուրդին անմիջապէս ան-  
համար յատկացուցած ստակէն մաս մ'ալ աղ-  
բին հանել տալու վարդապետ չեղաւ. ուստի մե-  
զի յանձնուած ստակը դարձեալ մնաց այն ա-  
մենայն գումարներուն պէս, որ այս երկու



տեր կան այն վանդակներուն ետևը... Բա... ցարձակ հրատարակումը շատ սաստիկ է այն...

« Միայն որմ մը այն խեղճ աղջկին... րնն աշխարհէս կը դատէ, բայց և այնպէս...

« Երկուսը երբեքն են անոնք որ իրենց... ուրախութիւնը միայն սեմնոց վրայ կը թու...

« Մտայն երբեքն այն լռիկ պատե... րուն ետև կիրքը իր լայնակէջ բոցերովը...

« Ըստ զիցարանութեան՝ Գեանիրա՝ ձէ... րակէսի սիրունին՝ Նիսոս յուշկապարկին թու...

առէ : Ընն առնն զարհուրելի և յուսա... հաս մրցանք առանց կենդանի վրայից, ու...

« Հեղինակը՝ արքայ... որ դա... նազան կարգերու կրօնաւարաց վանքերը...

« Բարեկարգութեան և նորոգու... թեան գազափայլ անգամ, որ լաւագոյն...

« Ընթերցողը գիրքը պիտի դատէ, բայց... հեղինակը կրնայ զինքը ապահովելընել...

« Մտայնի գործերը ժողովրդեան մէջ... մաներով օգտակար փոխակերպութիւններ...

« Հեղինակը, արքայ... իրեն ա... նունը տուած է, բայց իրեն դէմ եղած...

ՆԱԿԱՆՈՒՅՄՈՒՆԻՔ

Գումարաւոր Ընթերցասիրաց ընկե... րութեան մեծապատիւ անդամները կը հը...

Մանկացեալ Յակոբ օրու Օհա... նին և եղբորը Փլիպպոսին Եմա ալքը...

Պահճէ Գարուի թմաշխանը ծախ... ված ձէթը կը յիշեցունենք մեր ընթերցող...

Իւսկիւտար Պաղար պոռն Հայոց գե... րեղմանասան գըւլը քարուկիր Քաղնու...

Ուզողը պէտք է Ս. Պօլիս թարգ... ճիւղերուն մէջ Եւմէնիճեան Յակոբ ա...

Խնամուող Պատեմիկ թաղը զինե... րան փողոցին վրայ ծովահայտաց զեղեցիկ...

գիրքով կարգ մը նորաշէն տուններն մէ... կը ծախուէ : Ունի եօթն սենեակ, զատ...

Պէշիկթաշի Հայկազեան ընկերութեան... արդեամբը սպուած գրքերը :

Եւսջնորդ Հայ ընթերցանութեան... կամ նոր քերական և հեղարան, զին մէկ...

Փոքրիկ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱ... ԾԵՂՈՒ ԳԵՂ, ԿԱՄ ԾԻՐՓՓ

Եյս չերօրը պարզ նիւթերէ բաղադր... եալ պատուական զեղ մըն է նորածին...

Ս. Պօլիս թարգմանի Սարգսբեկի և Ս. Պ... արգասար Սրապեանի խնամութիւնը :

ՉԱՄՆ ԻՒՂ, ԲՈՒՆՈՒՎ ԻՆ ՄԱՔՐՈՒԱԾ... ԱՐԻՆՆ ամեն ձկան իւղերուն մէջ այս...

Table with 7 columns: Կ. ՊՈՒՍՍ, 2 ՅՈՒՆԻՍ, Թմանեան իրա Մէճ, Գումանեան իրա Մէճ

Table with 2 columns: ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈՒՆՍ 2 ՅՈՒՆԻՍ, Յորեն Թայրան, Յորեն Թայրան, Յորեն Թայրան, Յորեն Թայրան, Յորեն Թայրան, Յորեն Թայրան

Table with 2 columns: ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ, Գետոր(Մաղը)սե, Գետոր(Մաղը)սե, Գետոր(Մաղը)սե, Գետոր(Մաղը)սե, Գետոր(Մաղը)սե, Գետոր(Մաղը)սե

Table with 2 columns: ՄԵՏԱՔԱ (ԻՓԷՔ), Յիւլիան 10-12, Խոզակ Պրոսա չոր, Պարսկաստանի, Փրանք

Table with 2 columns: ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ, Խոստիկ Ուրա 400 շէյ, Խոստիկ Ուրա 400 շէյ, Խոստիկ Ուրա 400 շէյ, Խոստիկ Ուրա 400 շէյ, Խոստիկ Ուրա 400 շէյ

Table with 2 columns: Տարատակ 1-14, Բոլորակ, Ռուսոյ, Բարթիմէա, Ծծումբ (քիւլուր) Խոստիկ, Խոստիկ զէն, Պէյճ, Թրեխտի, Ռոմ Մաղից, Ամերիկա, Սրբաւան Վէննա, Թրեխտա և Գաղղ

Table with 2 columns: Սա լրագիրը շաբաթն անգամ մը կէյն շաբաթ օրերը, Սա լրագիրը շաբաթն անգամ մը կէյն շաբաթ օրերը, Սա լրագիրը շաբաթն անգամ մը կէյն շաբաթ օրերը, Սա լրագիրը շաբաթն անգամ մը կէյն շաբաթ օրերը